

ԵՐԿՐԱՔԻՄԻԱ, գիտություն Երկրի քիմիական կազմի, քիմիական տարրերի տարածման ու տեղաբաշխման օրինաչափությունների, բնական պրոցեսների ընթացքում ատոմների զուգակցման և միգրացիայի մասին: Ուսումնասիրում է նաև երկնաքարերի և երկնային այլ մարմինների (Լուսին, Արուսյակ) քիմ. կազմը, երկրաբանական պրոցեսների քիմիան, մշակում օգտակար հանածոների հանքավայրերի որոնման նոր մեթոդներ (տես *Երկրաքիմիական մեթոդներ որոնման*), կանխատեսում հանքային հումքի նոր աղբյուրներ: Ե. որպես գիտություն ձևավորվել է XIX դ. վերջերին: Օգտվում է քիմ., սպեկտրալ, ռենտգենյան, ռադիոքիմիական և այլ վերլուծություններից, սերտ կապված է երկրաբանության մյուս ճյուղերի (տես *Երկրաբանություն*), քիմիայի, ֆիզիկայի, թերմոդինամիկայի, վիճակագրական մաթեմատիկայի և այլ գիտությունների հետ: Ե-ի ասպարեզում մեծ ծառայություն ունեն սովետական գիտնականներ Վ. Ի. Վերնադսկին, Ա. Ե. Ֆերսմանը, Ա. Պ. Վինոգրադովը, Ն. Ի. Խիտարովը, արտասահմանում՝ Ֆ. Ու. Կլարկը, Վ. Մ. Հոլդշմիդը, Լ. Ն. Արհենսը, Կ. Թուրեքյանը և ուրիշներ: